ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՆԵԼԼԻ ՍԼԱՎԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Թամարա Բաղդասարյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դադարեցնելու հիմք հանդիսացող հանգամանքները,

հաշվի առնելով փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ առկա օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև՝ Պալատ)** աշխատակազմի ղեկավարի զեկուցագիրը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.10.2022թ. թիվ ԵԿԴ/0298/01/16 քրեական գործով եզրափակիչ մասում նշվել է՝

«14.Նելլի Սլավիկի Մինասյանին մեղավոր ճանաչել 18.04.2003թ.-ին ընդունված և 01.07.2022թ-ի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով, 35-300-րդ հոդվածի 1-ին մասով և 05.05.2021թ.-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ:

18.04.2003թ.-ին ընդունված և 01.07.2022թ.-ի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ պատիժ նշանակել՝ ազատազրկում՝ 4 /չորս/ տարի ժամկետով, 35-300-րդ

հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 6 /վեց/ տարի ժամկետով, 05.05.2021թ-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 5 /հինգ/ տարի ժամկետով:

18.04.2003թ.-ին ընդունված և 01.07.2022թ-ի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ հանցանքների համակցությամբ՝ նույն օրենսգրքի 35-300-րդ հոդվածի 1-ին մասով Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ նշանակված 6 /վեց/ տարի ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված պատժից՝ 1 /մեկ/ տարի և 05.05.2021թ-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից՝ 1 /մեկ/ տարի ժամկետով ազատազրկումը և Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ պատիժ նշանակել՝ ազատազրկում՝ 8 /ութ/ տարի ժամկետով:

Նշանակված պատժում հաշվակցել Նելլի Սլավիկի Մինասյանի՝ նախաքննության ընթացքում կալանքի տակ գտնվելու 2 /երկու/ ամիս ժամկետը և վերջնական պատիժ սահմանել՝ ազատազրկում՝ 7 /յոթ/ տարի 10 /տասը/ ամիս ժամկետով:

Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 18.04.2003թ.-ին ընդունված և 01.07.2022թ.-ի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառել, սահմանելով փարձաշրջան 5 /հինգ/ տարի ժամկետով՝ նրա վարքագծի նկատմամբ հսկողությունը դնելով ՀՀ Արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանման վրա՝ ըստ բնակության վայրի:

Փորձաշրջանի ընթացում Նելլի Սլավիկի Մինասյանի վրա դնել պարտականություն՝ չփոխել մշտական բնակության վայրը, իսկ այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ այդ մասին տեղյակ պահել իր վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական իրավասու մարմնին:

Նելլի Սլավիկի Մինասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, որից հետո այն վերացնել: (...)»:

Նելլի Սլավիկի Մինասյանը հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագիր՝ 2564):

Դատական գործի համաձայն՝ Նելլի Սլավիկի Մինասյանը դիտավորությամբ կատարված հանցագործության համար մեղավոր է ճանաչվել 18.04.2003թ.-ին ընդունված և 01.07.2022թ-ի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով, 35-300-րդ հոդվածի 1-ին մասով և 05.05.2021թ.-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքի մեջ (կաշառքի միջնորդություն) և նրա նկատմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.10.2022թ. դատավճռով վերջնական պատիժ է նշանակվել՝ ազատազրկում՝ 7 /յոթ/ տարի 10 /տասը/ ամիս ժամկետով:

Որոշվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանելով փորձաշրջան 5 /հինգ/ տարի ժամկետով՝ նրա վարքագծի նկատմամբ հսկողությունը դնելով ՀՀ Արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության համապատասխան ստորաբաժանման վրա՝ ըստ բնակության վայրի:

Դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 18.06.2024թ.:

Ուստի առկա է այն փաստը, որ փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առկա է փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-կետով նախատեսված հանգամանքը, այն է՝ *անձը չի կարող լինել փաստաբան, եթե նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:*

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝ *առկա է նույն օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը.*:

ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Դատվածությունը մարվում է՝*

1) սույն օրենսգրքի 84-րդ, 85-րդ, 88-րդ, 89-րդ հոդվածներով սահմանված պատժից ազատվելու, ինչպես նաև 86-րդ հոդվածով սահմանված կարգով պատժի կատարումը հետաձգելու դեպքերում՝ փորձաշրջանն ավարտվելուց հետո:»:

Նկատի ունենալով, որ փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանն ունի դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատվածություն, նրա դատվածությունը հանված կամ մարված չէ, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, ըստ որի՝ *արտոնագրի գործողությունը դադարեցնում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ այն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում կայացնելու միջոցով:*

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդը միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Դադարեցնել փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի փաստաբանական գործունեության թիվ 2564 արտոնագրի գործողությունը՝ այն ճանաչելով ուժը կորցրած:

2. Նելլի Սլավիկի Մինասյանին հանել փաստաբանների ցուցակից:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման օրինակն ուղարկել Նելլի Մինասյանին, ինչպես նաև հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է մեկամսյա ժամկետում բողոքարկվել դատական կարգով:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

13 մայիսի 2025թ.
թիվ 9/11-Ա
ք. Երևան